ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Թամարա Ղալայան, ՀՀ ֆինանսների նախարարության միջազգային համագործակցության վարչության օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության համակարգման բաժնի պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Ք. Բուխարեստ (Ռումինիա), 2023 թվականի սեպտեմբերի 12-ից մինչև սեպտեմբերի 15-ը:

3. Հրավիրող կողմը.

Համաշխարհային բանկ – Ռումինիայի ներքին գործերի նախարարության արտակարգ իրավիճակների դեպարտամենտ

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակցություն «Կրիտիկական աղետներին ու արտակարգ իրավիճակներին արձագանքման կարողությունները Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի ընտրված երկրներում» խորագրով տեղեկատվության փոխանակման տարածաշրջանային միջոցառմանը և ուսումնական այցին:

Ներկայումս Համաշխարհային բանկի (ՀԲ) հետ քննարկումներ են ընթանում Հայաստանում Արտակարգ իրավիճակներում պայմանական մասհանման գործիքի (CAT DDO) կիրառման հնարավորությունների շուրջ, և գործուղումը միտված էր ծանոթանալու Ռումինիայի՝ նշյալ գործիքի կիրառման հաջողված փորձին:

5. Քննարկված թեմաները.

Միջոցառմանը և ուսումնական այցին մասնակցել են պատվիրակություններ Հայաստանից, Վրաստանից, Ուզբեկստանից, Տաջիկստանից, Մոլդովայից և Խորվաթիայից: Նշյալ բոլոր երկրներում ՀԲ Արտակարգ իրավիճակներում պայմանական մասհանման գործիքը (CAT DDO) երբևէ չի կիրառվել:

Միջոցառումը մեկնարկել է Ռումինիայի ներքին գործերի նախարարության արտակարգ իրավիճակների դեպարտամենտի ղեկավար, պետական քարտուղար պրն" Ռաեդ Արաֆաթի կողմից Ռումինիայում արտակարգ իրավիճկաներին արձագանքման արդի համակարգի ու վերջին 30 տարիների ընթացքում այդ համակարգի զարգացման վերաբերյալ մանրամասն ներկայացմամբ: Այնուհետ ներկայացվել է համակարգի զարգացման գործում Համաշխարհային բանկի Աղետների ռիսկերի կառավարման բազմափուլ ծրագիրը, որը ներառում է՝

1. Արտակարգ իրավիճակներում պայմանական մասհանման 1-ին գործիք (CAT DDO) – մեկնարկել է 2018թ. մայիսին,

2. Առաջին ներդրումային ծրագրի ֆինանսավորում (IPF) – մեկնարկել է 2018թ. հուլիսին,

3. Երկրորդ և երրորդ ներդրումային ծրագրերի ֆինանսավորում – մեկնարկել է 2019թ. մայիսին,

4. Չորրրդ ներդրումային ծրագրի ֆինանսավորում – մեկնարկել է 2021թ. ապրիլին, և

5. Արտակարգ իրավիճակներում պայմանական մասհանման 2-րդ գործիք (CAT DDO) – ներկայումս ընթանում են ՀԲ-ի հետ բանակցություններ:

Հատկանշական է, որ Ռումինիայի կառավարությունը նախաձեռնել է աղետների ռիսկերի կառավարման՝ միանգամից մեծամասշտաբ և բազմափուլ ծրագիր: Համակարգի զարգացման գործում առանձնացվել են 3 հիմնական ուղղություններ՝ (ա) աղետներին պատրաստվածություն (ներառյալ՝ տեխնիկայի ձեռքբերումը), (բ) վաղ նախազգուշացում և արձագանք, (գ) վերականգնում և վերակառուցում: Եվ այն պարագայում, երբ Արտակարգ իրավիճակներում պայմանական մասհանման գործիքն (CAT DDO) առավելապես միտված է աղետներին արձագանքին, Ռումինիայի կառավարությունը զուգահեռ նախաձեռնել է նաև ներդրումային ֆինանսավորման ծրագրեր՝ պատրաստվածության ու վերականգնման համար:

Ինչ վերաբերում է Արտակարգ իրավիճակներում պայմանական մասհանման գործիքին,

(CAT DDO) ապա այն հնարավորություն է տալիս պետությանը բնական աղետների և առողջապահական խնդիրների հանգեցնող իրավիճակներում ստանալ ճկուն վարկեր՝ անհապաղ իրացվելիությամբ՝ աղետների հետևանքները մեղմելու համար: Այն ապահովում է 48 ժամվա ընթացքում իրացվելիության հնարավորություն: Յուրաքանչյուր երկրի առավելագույն սահմանաչափ սահմանվել է 500 միլիոն ԱՄՆ դոլարը կամ տվյալ երկրի ՀՆԱ-ի 0.25 տոկոսը:

Գործիքի ներքո վարկային գծին հասանելիություն ստանալու համար պետությունը պետք է ունենա պահանջներին համապատասխանող մակրոտնտեսական քաղաքականության շրջանակ, պետք է պատրաստի կամ արդեն ունենա աղետների ռիսկերի կառավարման բավարար ծրագիր, որը պարբերաբար կմշտադիտարկվի Համաշխարհային բանկի կողմից: Մասհանման համար անհրաժեշտ է աղետի ենթարկված երկրում հայտարարվի արտակարգ իրավիճակ:

Գործիքի մեկնարկը Ռումինիայում տրվել է 2018թ., և այն օգտագործվել է նաև COVID-19 համավարակի ընթացքում:

Այցի ընթացքում կազմակերպվել են նաև տեղում այցեր Ռումինիայի Ճգնաժամային կառավարման վերապատրաստումների բարելավման ազգային կենտրոն, Միզիլ քաղաքում ծրագրի ներքո վերջերս կառուցված հրշեջ կայան, ծանոթացրել ծրագրի ներքո ձեռք բերված նոր տեխնիկային, ներառյալ՝ ռոբոտ ջրցաններ, 4 և ավելի մարդ տեղափոխելու հնարավրություն ունեցող շտապօգնության մեքենաներ և այլն, որոնք լայնորեն կիրառվել են նաև COVID-19 համավարակի ընթացքում:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Առանձին խորհրդակցություն ենք ունեցել նաև Ռումինիայի ֆինանսների նախարարության ներկայացուցչի հետ, ում հետ քննարկել ենք գործիքի կիրառման ընթացքում բյուջետավորմանը, ծրագրի մշակմանը, ֆիսկալ ռիսկերին, զուգահեռ տրամադրված տեխնիկական աջակցության ուղղություններին, ծրագիրն իրականացնող մարմիններին, միմյանց միջև համագործակցությանն առնչվող հարցեր:

7.Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները,

պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Միջոցառման ընթացքում որևէ որոշումների ընդունում կամ փաստաթղթի ստորագրում նախատեսված չէր: Միաժամանակ, Ռումինիայի ֆինանսների նախարարության ներկայացուցչի հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն ըստ անհրաժեշտության հեռավար լրացուցիչ քննարկումներ անցկացնելու առնչությամբ:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

20.09.2023թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը՝

ՀՀ ֆինանսների նախարարություն.

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը՝

ՀՀ ֆինանսների նախարարության գլխավոր քարտուղարի 2023 թվականի օգոստոսի 8-ի թիվ 1330-Ա հրաման

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը).

Թամարա Ղալայան, միջազգային համագործակցության վարչության օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության համակարգման բաժնի պետ

4. Գործուղման վայրը՝

ք. Բուխարեստ (Ռումինիա)

5. Գործուղման ժամկետները՝

2023 թվականի սեպտեմբերի 12-ից մինչև սեպտեմբերի 15-ը

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

Համաշխարհային բանկ

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(*թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն*)
Ճանապարհածախս, գիշերավարձ

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը.

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*).
(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն.

Ծախսի տեսակը		**Թամարա Ղալայան**	**Ընդամենը** (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիածառայությանտեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	Էկոնոմ դաս	
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	-[1]	
Գիշերա-վարձ	Վճարը 1 օրվահամար (արտարժույթով)	-[2]	-
	Վճարը 1 օրվահամար (դրամ)	-	-
	Օրերի քանակը	3	3
	Ընդամենը (դրամ)	-	-
Օրապահիկ	Վճարը 1 օրվահամար (արտարժույթով)	-	-
	Վճարը 1 օրվահամար (դրամ)	-	-
	Օրերի քանակը	-	-
	Ընդամենը (դրամ)	-	-
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար	-	-
	Մուտքի արտոնագրի վճար	-	-
	Այլ ծախսեր (*նկարագրել*)	-	-
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)			

Ստորագրությունը, ամսաթիվը՝

Թ. Ղալայան

ԹԱՄԱՐԱ ՂԱԼԱՅԱՆ

20.09.2023թ.

1 Ավիատոմսը գնվել և տրամադրվել է ՀԲ-ի կողմից:

2 Կեցությունն ապահովվել է հրավիրողի կողմից՝ առանց վճարի հաշվարկման: